ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Հասմիկ Պետրոսյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա, ք. Վիեննա, 2025 թվականի մայիսի 19-ից մայիսի 30-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Vulnerability Diagnostics / Խոցելիության ախտորոշում» թեմայով դասընթացին, որի շրջանակներում ներկայացվել է տեսական մեթոդաբանությունը և գործիքակազմը, որոնք հնարավորություն կտան վերլուծելու և գնահատելու տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածների խոցելիությունները, ճգնաժամերին հնարավորությունը և առկա ռիսկերը:

Դասընթացն ընդգրկում է տնտեսական խոցելիությունների և ռիսկերի գնահատման մեթոդական մոտեցումների և գործիքակազմի ուսումնասիրություններ, որոնք հնարավորություն են տալիս առավել հիմնավոր գնահատական տալ ճգնաժամերի նկատմամբ տնտեսության դիմակայունության վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները՝

1. Մակրոտնտեսական կայունության և ճգնաժամերի հիմնահարցեր,
2. Խոցելիությունների գնահատման մոտեցումներ,
3. Հարկաբյուջետային խոցելիությունների գնահատում.
   - պարտքի կայունության և սուվերեն դեֆոլտի ռիսկի գնահատում,
   - «Սուվերեն ռիսկի և պարքի կայունության շրջանակ շուկային հասանելիություն ունեցող երկրների համար» գործիքակազմ
4. Ֆինանսական խոցելիությունների գնահատում.
   - բանկային հատվածում խոցելիությունների գնահատում. միկրո և մակրո մակարդակում ռիսկերի վերլուծություն (CAMELS, FSI)
   - ֆինանսական պարբերաշրջանների գնահատման մոտեցումներ,
   - բանկային ճգնաժամերի էությունը, պատճառները, կարգավորումները,
5. Արտաքին խոցելիությունների գնահատում.
   - արտաքին հաշվեկշռվածության գնահատում,
   - միջազգային պահուստների համարժեքության գնահատում,

6. Արժութային ճգնաժամերի կանխատեսման մեթոդներ. Արժութային ճգնաժամերի էությունը, արժութային շուկայի ճնշման համաթիվ, ռիսկերի կանխատեսման վեկտորական ավտոռեգրեսիվ, դիխոտոմիկ մոդելներ և ազդանաշանային մոտեցում,
7. Ճգնաժամերի զարգացման ուղղությունները (մուտացիա և «վարակ») և դրանց կանխատեսումը,
8. Կլիմայի փոփոխության արդյունքում ֆինանսական կայունության ռիսկերի գնահատում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է շնորհանդես՝ հետհամաճարակային ժամանակահատվածում Լեհաստանի Հանրապետության տնտեսության խոցելիությունների ախտորոշում: Կիրառելով ներկայացված գործիքակազմը՝ բացահայտվել են տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածներում առկա խոցելիությունները, կուտակված ռիսկերը և ներկայացվել են տնտեսության դիմակայունությունը բարձրացնելուն ուղղված քաղաքականության առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

04 հունիսի, 2025թ.